

# ՄԻԶԱԶԳՎՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՆՆԱ ՓԱԽՆՅԱՆ

*ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ,  
միջազգային տնտեսական հարաբերությունների  
անբիռնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

«ՈՉ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ

ԱՂԱՄԱՆԴՆԵՐԻ»<sup>1</sup>

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Վերջին շրջանում ադամանդի համաշխարհային շուկայում տեղի են ունենում էական փոփոխություններ, որոնց բնույթը պայմանավորված է համընդհանրացմամբ, ահաբեկչության և ստվերային տնտեսության դեմ պայքարին ուղղված երկրների համատեղ գործողություններով, ինչպես նաև մի շարք աֆրիկյան երկրներում (Անգոլա, Լիբերիա, Սիերա Լեոնե, Հարավային Աֆրիկա) ադամանդի բիզնեսում ազգային շահերի գիտակցման ուժեղացմամբ: Վերոհիշյալ գործոնները ձևավորում են ադամանդի համաշխարհային շուկայի նոր կառուցվածք:

Ծագելով Անգոլայում դեռևս 1998 թ.՝ «կոնֆլիկտային ադամանդների» խնդիրը անգուլականից արագ վերաճեց համաաֆրիկյանի, ապա ստացավ համաշխարհային բնույթ: Ներկայումս «կոնֆլիկտային ադամանդներ» եզրույթն օգտագործվում է՝ բնութագրելու անմշակ ավաստների ցանկացած խմբաքանակ, որի իրացումից ստացված հասույթը ծառայում է զինված հակամարտությունների ֆինանսավորմանը: Թեև ադամանդի համաշխարհային

<sup>1</sup> ՄԱԿ-ի տերմինաբանության համաձայն՝ «կոնֆլիկտային» է համարվում ադամանդների այնպիսի ապօրինի վաճառքը, որից ստացված հասույթն ուղղվում է ահաբեկչական շարժումների և զինված հակամարտությունների ֆինանսավորմանը: 1990-ականների վերջերին տարածում ստացած այդօրինակ երևույթների դեմ պայքարելու համար ադամանդի հարավաֆրիկյան արտադրողների պահանջով և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախաձեռնությամբ ստեղծված «Քիմբերլեյ գործընթացի հավաստագրման ծրագիր» համակարգը սահմանում է չմշակված ադամանդի արտադրությանն ու առևտրի վերահսկողությանն ուղղված կոշտ պահանջներ, որոնց պահպանման դեպքում միայն անդամ երկրներին թույլատրվում է հավաստել իրենց տարածքում արտադրվող և արտահանվող ավաստների «ոչ կոնֆլիկտային» (այսինքն՝ օրինական) լինելը՝ այդպիսով կանխարգելելով «կոնֆլիկտային» ադամանդների մուտքն օրինական առևտուր:

արդյունահանման մեջ «կոնֆլիկտային ադամանդների» տեսակարար կշիռն ընդամենը 3-5%<sup>2</sup> է, դրանց առևտրի դադարեցման խնդիրը վայելում է միջազգային մի շարք հեղինակավոր կառույցների ուշադրությունը:

2002 թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի աջակցությամբ<sup>3</sup> ստեղծվեց չմշակված ադամանդների հավաստագրման միջազգային համակարգ, որը ստացավ «Քիմբերլեյ գործընթացի հավաստագրման ծրագիր» (ՔԳՀԾ) պաշտոնական անվանումը: 2003 թվականից ուժի մեջ մտած Քիմբերլեյ գործընթացը (ՔԳ) կոչված է «կոնֆլիկտային ադամանդների» ապօրինի շրջանառության կանխարգելմանը:

2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Քիմբերլեյ գործընթացի մասնակից 54 կողմերը<sup>4</sup> ներկայացնում են 81 երկիր (Եվրոմիությունն իր անդամակից 28 երկրներով<sup>5</sup> Քիմբերլեյ գործընթացում հանդես է գալիս որպես մեկ մասնակից), որոնց բաժին է ընկնում ավաստի համաշխարհային արտադրության գրեթե 99,8%-ը<sup>6</sup>: Վերջիններս պարտավորվել են օրինական կերպով առևտուր անել միայն համակարգի մյուս անդամների հետ, ընդ որում, ադամանդի հումքի միջազգային մատակարարումների բոլոր փուլերը (արտահանում, ներմուծում, փոխադրում) պետք է ուղեկցվեն Քիմբերլեյ գործընթացի հավաստագրերով (ՔԳՀ), որոնք երաշխավորում են դրանց «ոչ կոնֆլիկտայնությունը»:

ԱՊՀ անդամ երկրներից Քիմբերլեյ գործընթացում ներգրավված են Հայաստանը, Բելառուսը, Ռուսաստանը, Ուկրաինան և Ղազախստանը, իսկ ՀՀ սահմանակից երկրներից՝ միայն Թուրքիան:

Քիմբերլեյ գործընթացի շնորհիվ կարճ ժամանակահատվածում սահմանափակվեց կոնֆլիկտային ադամանդների հոսքը համաշխարհային շուկա: Ոլորտի փորձագետների գնահատմամբ ներկայումս կոնֆլիկտային ադամանդների մասնաբաժինը միջազգային առևտրում 1% է՝ 1990-ականների 15%-ի փոխարեն<sup>7</sup>: Ծրագրի մեկնարկի առաջին իսկ տարիներին (2003-2006 թթ.) միայն Եվրոպական միության մաքսային ծառայությունների կողմից առգրավվել է ավելի քան 12000 կարատ ավաստ՝ 1,5 մլն ԱՄՆ դոլար արժեքով<sup>8</sup>:

<sup>2</sup> Տե՛ս **Улин Д.**, Современные тенденции на мировом рынке алмазов: Т5/10: Международное экономическое сотрудничество в глобальном мире /под ред. Н.Н. Левенцева/. М.: МГИМО – Университет, 2007, էջ 41:

<sup>3</sup> Տե՛ս **United Nations General Assembly Resolution 56/263**. The role of diamonds in fuelling conflict: breaking the link between the illicit transaction of rough diamonds and armed conflicts as a contribution to prevention and settlement of conflicts (A/RES/56/263), 13 March 2002:

<sup>4</sup> 2013 թ. հուլիսի դրությամբ ՔԳՀԾ համակարգը համախմբում է 54 մասնակցի՝ *ԱՄՆ, Անգոլա, Ավստրալիա, Բանգլադեշ, Բելառուս, Բոթսվանա, Բրազիլիա, Գայանա, Գանա, Գվինեա, ԵՄ, Զիմբաբվե, Թաիլանդ, Թուրքիա, Ինդոնեզիա, Իսրայել, Լատու, Լեսոթո, Լիբանան, Լիբերիա, Խորվաթիա, Կամբոջա, Կամերուն, Կանադա, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Կոնգո, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն, Կոտ դ'Իվուար, Հայաստան, Հարավային Աֆրիկա, Հարավային Կորեա, Հնդկաստան, Ղազախստան, Ճապոնիա, Մալայզիա, Մավրիկիոս, Մեքսիկա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Նամիբիա, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Շվեյցարիա, Շրի Լանկա, Չինաստան, Պանամա, Ռուսաստանի Ղաշնություն, Սիերա Լեոնե, Սինգապուր, Սվազիլենդ, Վենեսուելա, Վիետնամ, Տանզանիա, Տոգո, Ուկրաինա:*

<sup>5</sup> 2013 թվականի հուլիսի 1-ից Եվրոմիության շարքերն է համալրել Խորվաթիան՝ դառնալով 28-րդ անդամ երկիրը:

<sup>6</sup> Տե՛ս <http://www.kimberleyprocess.com/en/about>

<sup>7</sup> Տե՛ս **Ա. Փախյան**, *Արտաքին առևտրի ազատականացումը Հայաստանի Հանրապետությունում*: «Ազրոգիտություն», թիվ 9-10 (625-626), 2010, էջ 373-378, <http://asrc.am/uploads/media/s-20.pdf>:

<sup>8</sup> Տե՛ս The Kimberley Process Certification Scheme, Third Year Review, October, 2006, էջ 22:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը խրախուսում է<sup>9</sup> Քիմբերլեյ գործընթացի իրականացումը, թեև վերջինս խոչընդոտում է անմշակ ադամանդների առևտրին համակարգի մասնակից չհանդիսացող ԱՀԿ անդամ երկրներում: Քիմբերլեյ գործընթացի շրջանակներում կիրառվող սկզբունքները ԱՀԿ-ի կողմից որակվել են որպես համընդհանուր հասարակական շահերից բխող «միջազգային ստանդարտներ»<sup>10</sup>:

Քիմբերլեյ գործընթացի հավաստագրման ծրագրին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2002 թ. դեկտեմբերի 19-ին՝ ՀՀ Կառավարության N 2081-Ն որոշմամբ<sup>11</sup>: Սկսած 2003-ի հունվարի 1-ից՝ ՀՀ-ում ավմաստի հումքի առք ու վաճառքն իրականացվում է միայն Քիմբերլեյ գործընթացի անդամ երկրների հետ, ընդ որում, ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000 («չմշակված, չտեսակավորված ավմաստներ»), 710221000 («արդյունաբերական՝ չմշակված կամ պարզապես սղոցված, ձեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված ավմաստներ») և 710231000 («ոչ արդյունաբերական՝ չմշակված կամ պարզապես սղոցված, ձեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված ավմաստներ»)՝<sup>12</sup> ծածկագրերին դասվող ավմաստի հումքի ցանկացած բեռ ուղեկցվում է արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված Քիմբերլեյ հավաստագրով, որի բացակայության դեպքում չի թույլատրվում իրականացնել վերոհիշյալ ծածկագրերով ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող ավմաստների մաքսային ձևակերպումները<sup>13</sup>: Իսկ ներմուծված ավմաստների՝ մաքսային սահմանով բացթողումն իրականացվում է միայն լիազորված մարմնի կողմից հավաստագրի կտրոնի հեռացման և հավաստագրի վրա «ներմուծումը հաշվառված է» դրոշմակնիքը դրված լինելու դեպքում<sup>14</sup>: «Ներմուծումը հաշվառված է» դրոշմակնիքի առկայությունն այդ դեպքում հավաստում է լիազոր մարմնի կողմից հավաստագրի կտրոնի հեռացման փաստը: Սա նշանակում է՝ անմշակ ադամանդի ցանկացած արտահանում և ներմուծում, ՔԳՀԾ պահանջներին չհամապատասխանելու դեպքում, կղիտարկվի որպես մաքսանենգ ապրանքների առաքում, որի նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ՝ ՀՀ քրեական օրենսգրքի (հոդված 215) և ՀՀ մաքսային օրենսգրքի (հոդվածներ 183, 198, 200-203) համապատասխան դրույթների համաձայն:

Տնտեսության և, մասնավորապես՝ արտաքին առևտրի ազատականացման գործընթացներում ներգրավվելու առաջին իսկ տարիներից ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թան-

<sup>9</sup> Տե՛ս World Trade Organization, Kimberley Process Certification Scheme for Rough Diamonds, Decision of 15 December 2006, WT/L/676:

<sup>10</sup> Տե՛ս Kimberley Process: Workshop on WTO Conformity, Chairman's Non-Paper, Revised version, 14 March 2002, էջ 11:

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2081-Ն որոշումը «Քիմբերլեյ գործընթացին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին»:

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1489-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի N 505-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի N 505-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2081-Ն որոշման կիրարկումն ապահովող միջոցառումների մասին»:

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 212-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի N 505-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»:

կարծեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբն ունեցել է ամենամեծ բաժինը: Ընդ որում, նախքան համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, երկրի արտաքին առևտրի կառուցվածքում ապրանքախումբն ամենափոքր մասնակցությունն ունեցել է 1998 թ., երբ վերջինիս բաժին է ընկել երկրի ներմուծման 5%-ը (45,5 մլն ԱՄՆ դոլար), արտահանման 24%-ը (53,1 մլն ԱՄՆ դոլար) և ամբողջ ապրանքաշրջանառության գրեթե 8,8%-ը<sup>15</sup>: Միևնույն ժամանակ, ոլորտի լավագույն և դեռևս անգերազանցելի ցուցանիշն արձանագրվել է 2003-ին, երբ ադամանդագործության և ոսկերչության արտադրանքն ապահովել է ՀՀ արտահանման 51,2%-ը (350,7 մլն ԱՄՆ դոլար), ներմուծման 26%-ը (333,1 մլն ԱՄՆ դոլար) և երկրի ողջ ապրանքաշրջանառության 34.8%-ը<sup>16</sup>: Եթե մինչ այդ ապրանքախմբի արտահանման ծավալներն, անկախ դրանց տատանողական բնույթից, կայուն կերպով գերազանցում էին ներմուծումը, ապա 2004 թվականից հետո դրսևորվեց հակառակ միտումը. Հայաստանը թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների զուտ արտահանողից վերածվեց զուտ ներմուծողի: Իրադրությունը սրվեց 2008-2010 թթ. ճգնաժամի ընթացքում: Մասնավորապես, 2009 թ. ապրանքախմբին բաժին է ընկել ՀՀ ներմուծման 3,2%-ը և արտահանման 14,8%-ը, իսկ 2010 թ., համապատասխանաբար՝ ներմուծման 4,2%-ը և արտահանման 12,9%-ը<sup>17</sup>: Ընդ որում, բացարձակ արժեքով ներմուծումը գերազանցել է արտահանումը, ինչը վկայում է ապրանքախմբի արտահանման գծով ՀՀ մրցակցային դիրքերի թուլացման մասին: Եվ սա այն դեպքում, երբ ոլորտի զարգացման համար Հայաստանում ստեղծվել են լավագույն պայմաններ: Որպես տնտեսության գերակա ճյուղ՝ ադամանդագործության և ոսկերչության բնագավառում սահմանվել են մի շարք արտոնություններ՝ հումքի ներմուծում առանց մաքսատուրքերի, մաքսատուրքերի կիրառմամբ պատրաստի զարդերի ներմուծման սահմանափակում, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների իրացման ազատում ԱԱՀ-ից, թղինգային (պատվիրատուից ներմուծված հումքը վերամշակող և վերաարտահանող) ընկերությունների ազատում շահութահարկից, ոսկու առևտրով զբաղվողներին լիցենզավորումից ազատում և այլն: Ընդ որում, այն դեպքում, երբ հայկական կողմը վերամշակում է պատվիրատուի սեփականությունը հանդիսացող ադամանդները, արտադրանքի թողարկման վիճակագրությունում արտացոլվում է միայն ավելացված արժեքը:

Կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թթ. ծրագրով ոսկերչության և ադամանդագործության բնագավառում վերացվել է նաև շահութահարկի գծով շրջանառության 1%-ի կանխավճարի պարտադիր մուծ-

<sup>15</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թվականին (Ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման)», վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 26, 30:

<sup>16</sup> Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003 թվականին (Ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման)», վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 28, 32:

<sup>17</sup> Համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին (Ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման)», ՀՀ ԱՎԾ, Եր., 2012, էջ 38:

ման դրույթը՝ գործարարների համար լրացուցիչ ազատ ֆինանսական ռեսուրսներ ստեղծելու ակնկալիքով<sup>18</sup>:

Ակնագործության և ոսկերչության ոլորտը մշտապես եղել է ՀՀ արտաքին առևտրի հիմնախնդիրներն ուսումնասիրող տնտեսագետների ուշադրության կենտրոնում, ովքեր տարբեր մեկնաբանություններ են անում վերջին տարիների ընթացքում դրսևորված միտումների վերաբերյալ: Նույնիսկ արժութային փոխարժեքների և պետական քաղաքականության բարենպաստ ռեժիմների առկայության դեպքում ոլորտում 2003 թվականից հետո սկսված անկումը որոշ մասնագետներ<sup>19</sup> պայմանավորում են ճյուղին տրված չափազանց լայն արտոնություններով: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ «եկամուտների չափազանց ցածր մակարդակ ունեցող Հայաստանում անհմաստ է ռազմավարական հայտարարել այնպիսի մի ոլորտ, որի արտադրանքը բավարարում է բնակչության երկրորդային պահանջունքները»<sup>20</sup>:

Ներկայացված դիրքորոշումներում անտեսվում են համաշխարհային միտումների հնարավոր ազդեցությունները՝ բնագավառի անկման պատճառները բացառապես վերագրելով ներտնտեսական գործոններին: Մինչդեռ Հայաստանը, որպես համաշխարհային տնտեսության տարր, չի կարող խուսափել արտաքին ազդակների ներգործությունից: Համաշխարհային տնտեսությունում երկրի չափազանց փոքր կշիռը սահմանափակում է համընդհանուր զարգացումների վրա ներազդելու վերջինիս հնարավորությունները, սակայն ոչ մի դեպքում չի ապահովագրում այդ զարգացումների «գոհը» դառնալու վտանգից: Վերը նշվածն ընդգծում է վերջին տարիներին Հայաստանի ադամանդագործության և ոսկերչության ոլորտում տեղ գտած փոփոխությունները համաշխարհային զարգացումների համատեքստում դիտարկելու անհրաժեշտությունը:

2005 թվականի սկզբից նավթի աճող գներն ու դոլարի դիրքերի շարունակական թուլացումը խթան հանդիսացան համաշխարհային շուկայում ոսկու սպառման ծավալների ավելացման համար. 2005 թ. առաջին կեսին ոսկու համաշխարհային սպառման ծավալային՝ տոննաներով արտահայտված աճը կազմեց 21%, իսկ դոլարով արտահայտված արժեքային աճը՝ 29%, որն ուղեկցվեց ոսկու գների կտրուկ բարձրացմամբ: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենաթույլ տնտեսական ցնցումներն ու ձգնաժամերն անպայմանորեն հանգեցնում են ոսկու գների աճին: Ոսկու գների աճի տեմպերը նոր թափ ստացան հաջորդող տարիներին. 2006-2007 թթ. համաշխարհային գինը գերազանցեց 2003 թ. մակարդակի (356,86 ԱՄՆ դոլար 1 տրոյական ունցիայի դիմաց՝ 2003 թ. հունվարի դրությամբ) կրկնապատիկը, 2010-ին (1 տրոյական ունցիայի դիմաց 1148,69 ԱՄՆ դոլար) ոսկու համաշխարհային գինը գերազանցեց 2003 թ. եռապատիկը, իսկ արդեն 2012-ին՝ նույնիսկ քառապատիկը: 2012 թ. ոսկու համաշխարհային գինն արձանագրեց 1 տրոյական ունցիայի դիմաց 1668,7 ԱՄՆ դոլար մակար-

<sup>18</sup> Ամփոփ հաշվետվություն ՀՀ Կառավարության հակաձգնաժամային միջոցառումների իրականացման մասին, Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, Եր., «Ֆենոմեն», 2009, էջ 11-12:

<sup>19</sup> Տե՛ս Վ. Հարությունյան, Ա. Թամազյան, Ն. Հայրապետյան, Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 115-116:

<sup>20</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, Համեմատական առավելության սկզբունքը և ՀՀ արտահանման կառուցվածքի բարելավման հնարավորությունները, թեկնածուական ատենախոսություն, Եր., 2008, էջ 76:

դակը<sup>21</sup>: Ենթադրվում էր, որ արդյունահանման համաշխարհային ծավալների տարեցտարի կրճատման պայմաններում ոսկու համաշխարհային գների շարունակական աճը բարենպաստ պետք է լիներ հումքային պաշարներով ապահովված (Սոտքի, Մեղրաձորի հանքավայրեր), ոսկերչության և ադամանդագործության բնագավառում մասնագիտացած մի երկրի համար, որի արտահանման մեկ երկրորդն ապահովում է ոլորտի արտադրանքը: Փոխարենը, Հայաստանում թանկարժեք քարերի և մետաղների արտահանման ծավալների փոփոխություններն ուղեկցվեցին գլխավորապես անկման միտումների ուժեղացմամբ:

Տարբեր տարիներին ապրանքախմբի արտահանման բաղադրիչների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկիրն իրականում մասնագիտացած է ոսկերչական իրերի արտադրության համեմատությամբ նվազ ավելացված արժեք ստեղծող ադամանդի վերամշակման գործընթացում (մինչև 2003 թ. ադամանդե քարն ապահովել է «թանկարժեք» ապրանքախմբի թե՛ արտահանման և թե՛ ներմուծման 80%-ից ավելին), որը թույլ է տալիս ոլորտի արտահանման ծավալների անկման պատճառները որոնել հենց ադամանդի առևտրի միջազգային միտումներում:

Վերջին տարիներին բնագավառում տեղ են գտել որոշակի փոփոխություններ. 2004-2006 թթ. ադամանդին բաժին է ընկել ոլորտի ողջ ապրանքաշրջանառության մոտ 75%-ը, իսկ 2007-2012 թթ., չնայած ադամանդի ներմուծման ծավալների գերազանցմանը, դրա մասնաբաժինն ապրանքախմբի ներմուծման մեջ որոշակիորեն կրճատվել է (2007 թ.՝ 55%, 2008 թ.՝ 47,5%, 2009 թ.՝ 61%, 2010 թ.՝ 59,2%, 2011 թ.՝ 59%, 2012 թ.՝ 54,2%)<sup>22</sup>, այնինչ համեմատաբար փոքր արտահանման ծավալ (արժեքային արտահայտությամբ) ապահովող ադամանդը շարունակում է գերակշռել ոլորտի ողջ արտահանման կառուցվածքում, ինչը ևս վառ վկայությունն է ադամանդագործության և ոսկերչության ասպարեզում ՀՀ առևտրային պայմանների վատթարացման: 2008 թ. ադամանդե քարն ապահովել է «թանկարժեք» ապրանքախմբի արտահանման 83,2%-ը (2009 թ.՝ 57,1%, 2010 թ.՝ 67,8%, 2011 թ.՝ 58%, իսկ 2012 թ.՝ 45,9%), ներմուծման 47,5%-ը, և սա այն դեպքում, երբ ներմուծումը զգալի չափով գերազանցել է արտահանումը:

Հարկ է նկատել, որ 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը Հայաստանին լավ հնարավորություն է ընձեռել վերականգնելու երբեմնի մրցակցային դիրքերը ադամանդագործության և ոսկերչության բնագավառում: 2009 թ., նախորդ տարվա համեմատությամբ, զգալիորեն կրճատվել է խզումը ոլորտի արտադրանքի արտահանման և ներմուծման ցուցանիշների միջև: Այսպես՝ եթե 2008 թ. ներմուծումը 131,6 մլն ԱՄՆ դոլարով (1,8 անգամ) գերազանցում էր արտահանումը, ապա 2009 թ. այդ տարբերությունը կրճատվեց մինչև 5,7 մլն ԱՄՆ դոլարի՝<sup>23</sup> շնորհիվ ներմուծման ծավալների առավել կտրուկ անկման: Վերջինս բարենպաստ մեկնարկային հնարավորություններ է ստեղծել ոլորտի հետագա զարգացման և արտահանման ընդլայնման համար: Առավել ևս, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2010 թվականին, 2003-ի համեմատությամբ, նույնիսկ ադամանդի

<sup>21</sup> St'e Динамика мировых цен на золото (London Fix PM), USD/унцию (www.ereport.ru - Мировая экономика и мировой рынок):

<sup>22</sup> Հաշվարկվել է համաձայն ՀՀ ԱԿԾ պաշտոնական տվյալների (<http://armstat.am>):

<sup>23</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2009 թվականին ըստ ԱՏԳ ԱԱ 8-նիշ դասակարգման», ՀՀ ԱԿԾ, Եր., 2010, էջ 135:

արտադրության, արտահանման և ներմուծման բացարձակ ցուցանիշներով անկման պայմաններում ՀՀ-ում նկատվել է ադամանդի արտահանման հսկայական աճ<sup>24</sup>:

2011 թ. ադամանդագործության և ոսկերչության արտադրանքն ապահովել է ՀՀ արտահանման 14,7%-ը (196,44 մլն ԱՄՆ դոլար), ներմուծման 5,2%-ը (կամ 214,87 մլն ԱՄՆ դոլար) և երկրի ողջ ապրանքաշրջանառության 7,5%-ը<sup>25</sup>: 2012 թ. «թանկարժեք» ապրանքախմբի արտահանման և ներմուծման ցուցանիշները թեև նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել են, այնուհանդերձ, պահպանվել է դրանց միջև բացասական տարբերության կրճատման դրական միտումը: Այսպես՝ 2012 թ. «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանումը կազմել է 173 մլն ԱՄՆ դոլար. վերջինս ներմուծման ցուցանիշը (179,1 մլն ԱՄՆ դոլար) զիջել է ընդամենը 6,1 մլն ԱՄՆ դոլարով<sup>26</sup>:

Ճգնաժամի ազդեցությունն ադամանդի շուկայում զգալի դարձավ 2008 թ. սեպտեմբերին, երբ հումքի վերավաճառքը համաշխարհային շուկայում դադարեց եկամտաբեր լինելուց: Ճգնաժամի առաջին փուլը նոր թափ հաղորդեց ադամանդի համաշխարհային գների աճին: Միայն Բելգիայում (որը ՀՀ խոշորագույն գործընկերն է ադամանդի վերամշակման բնագավառում) 2008 թ., 2007 թ. համեմատությամբ, ադամանդի գների աճը կազմել է 16,6%<sup>27</sup>: Նշենք նաև, որ մինչ այդ՝ 2000-2006 թթ. ընթացքում, ադամանդի համաշխարհային գներն աճել էին 30%-ով: Ճգնաժամի խորացմամբ կրճատվեցին ադամանդի իրացման, ապա նաև արտադրության ծավալները: 2008-2009 թթ. ադամանդի գների անկումը զսպում էին ավմաստ արդյունահանող աշխարհի առաջատար երկրները (Ռուսաստան, Բոթսվանա, Կանադա, Անգոլա) վաճառքի սահմանափակման քաղաքականությամբ: Մինչ ադամանդագործության «հսկաները» զգում էին Ճգնաժամի հետևանքները (արտադրության կրճատում՝ պայմանավորված բարձր գներով և իրացման փոքր ծավալներով), Արևելքում, մասնավորապես՝ Հնդկաստանում և Չինաստանում ոչ միայն չէր կրճատվել, այլև նույնիսկ ավելացել էր զարդեղենի իրացումը:

Հայաստանի պարագայում իրատեսական չէ ադամանդագործության և ոսկերչության անկումը պայմանավորել սոսկ համաշխարհային Ճգնաժամի ազդեցությամբ, քանզի այստեղ ոլորտի լճացումը սկսվել էր Ճգնաժամից ավելի վաղ:

Ներկայումս Հայաստանը Քիմբերլեյ գործընթացի մասնակից երկրների հետ է իրականացնում ոչ միայն անմշակ ադամանդի, այլ նաև ոսկերչական արտադրանքի արտաքին առևտրի գերակշիռ մասը: 2011 թ. ԲԳՀԾ անդամ երկրներին է բաժին ընկել թանկարժեք քարերի և մետաղների ՀՀ արտա-

<sup>24</sup> Տե՛ս Ա. Փախյան, Արտաքին առևտրի ազատականացման տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում, Ը.00.06-«Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ՀՀ ԿԳՆ, ՀՊՏՀ, Եր., 2012, էջ 105-110:

<sup>25</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին (ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման», վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 33, 35, 38:

<sup>26</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 120:

<sup>27</sup> Տե՛ս Обзор мирового рынка алмазов и бриллиантов, Рейтинговое агентство ТОП-ЭКСПЕРТ-[http://expert-rating.ru/marketing\\_research/index.php?productID=850](http://expert-rating.ru/marketing_research/index.php?productID=850)

հանման 97,7%-ը (191,9 մլն ԱՄՆ դոլար) և ներմուծման 98,9%-ը (212,6 մլն ԱՄՆ դոլար)<sup>28</sup>: 2012 թ. ՔԳՀԾ անդամ երկրներ է ուղղվել ՀՀ-ից թանկարժեք քարերի և մետաղների արտահանման 95,9%-ը (165,8 մլն ԱՄՆ դոլար), միաժամանակ, նշված երկրներին է բաժին ընկել ներմուծման 99,9%-ը (178,6 մլն ԱՄՆ դոլար)<sup>29</sup>:

Թեև Քիմբերլեյ գործընթացին միանալուց ի վեր գրեթե կրկնապատկվել է Հայաստանի հետ թանկարժեք քարերի (ինչպես նաև թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի) առևտուր անող երկրների ցանկը, մեր երկրի համար գործընթացն արդյունավետ չի կարելի գնահատել՝ մասնավորապես արտահանման ծավալների վրա ունեցած ներգործության տեսանկյունից: Առավել ևս, որ Քիմբերլեյ գործընթացի մեկնարկին հաջորդող տարվանից սկսվեց մինչ այդ ՀՀ-ում արտահանման ուղղվածություն ունեցող ամենախոշոր ապրանքախմբի շրջանառության ծավալների կայուն անկումը:

Որպես ադամանդի վերամշակման մեջ մասնագիտացած երկիր՝ Հայաստանը չափազանց փոքր մասնաբաժին ունի ՔԳ շրջանակներում իրականացվող անմշակ ադամանդի համաշխարհային առևտրում: «Ոչ կոնֆլիկտային» ադամանդների համաշխարհային ներմուծման մեջ Հայաստանն ամենամեծ մասնակցությունն ունեցել է 2005 թվականին՝ 0,57% (աղյուսակ 1), հաջորդող տարիներին նշված ցուցանիշը զգալիորեն նվազել է: «Ոչ կոնֆլիկտային» ադամանդների համաշխարհային արտահանման մեջ ՀՀ ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է 2011 թվականին՝ 0,08% (աղյուսակ 2):

Քիմբերլեյ գործընթացի շրջանակներում 2010-2011 թթ. արձանագրվել էր անմշակ ադամանդների՝ ՀՀ ներմուծման ծավալների զգալի աճ, ինչը կարևոր նախադրյալ է երկրում ադամանդի վերամշակման գործընթացների ակտիվացման համար: Ընդհանուր առմամբ, չմշակված ադամանդի համաշխարհային առևտրի հետձգնաժամային աշխուժացումը հատուկ է ՔԳՀԾ մասնակից գրեթե բոլոր երկրներին:

Սակայն հաջորդող ժամանակահատվածում 2010-2011 թթ. արձանագրված միտումները չպահպանվեցին՝ խաթարելով երկրում ադամանդի վերամշակման գործընթացի ակտիվացման հնարավորությունները: 2012 թ. ՀՀ-ում անմշակ ադամանդի ներկրումը ՔԳՀԾ մասնակից երկրներից, նախորդ տարվա համեմատությամբ, կրճատվեց 47,2%-ով, իսկ արտահանումն այդ երկրներ կրճատվեց շուրջ 77,8%-ով (աղյուսակ 1, 2):

<sup>28</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման», ՀՀ ԱԿԾ, Եր., 2012, էջ 198:

<sup>29</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման», ՀՀ ԱԿԾ, Եր., 2013, էջ 281-282:



Անճաշակ ադամանդի համաշխարհային ներմուծումը  
Քիմբերլեյ գործընթացի շրջանակներում<sup>30</sup>

Երկիր	Տարի	Ներմուծում			
		ծավալը (հազար կարատ)	արժեքը (հազար ԱՄՆ դոլար)	միավոր կարատի միջին գինը (ԱՄՆ դոլար)	քԳՀ քանակը
Հայաստանի Հանրապետություն	2004	807,64	195158,02	241,64	412
	2005	670,09	214055,42	319,44	385
	2006	366,31	149697,22	408,66	283
	2007	255,01	92284,08	361,89	249
	2008	160,75	59628,63	370,94	175
	2009	101,86	41290,44	405,34	126
	2010	537,50	60322,52	112,23	177
	2011	334,67	80165,38	239,54	186
	2012	128,67	42292,76	328,68	156
ՔԳՀ նասնակից երկրներ	2004	499438,87	31887235,10	63,85	55158
	2005	501671,86	37609260,96	74,97	57818
	2006	479031,50	35635769,12	74,39	54775
	2007	478741,85	40072280,73	83,70	56418
	2008	405643,30	38788528,07	95,62	47987
	2009	317778,66	25027404,55	78,76	38979
	2010	413651,63	37571661,79	90,83	51683
	2011	384458,79	50889547,12	132,37	54107
	2012	406328,86	50922681,96	125,32	54964

<sup>30</sup> Աղբյուրը՝ **Kimberley Process Rough Diamond Statistics**  
 Annual Global Summary: 2004 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, July 17, 2008, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2004/2004GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2004/2004GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2005 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, July 17, 2008, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2005/2005GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2005/2005GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2006 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, July 17, 2008, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2006/2006GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2006/2006GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2007 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, July 24, 2008, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2007/2007GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2007/2007GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2008 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, April 26, 2012, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2008/2008GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2008/2008GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2009 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, April 9, 2012, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2009/2009GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2009/2009GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2010 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, July 28, 2011, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2010/2010GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2010/2010GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2011 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, July 24, 2012, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2011/2011GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2011/2011GlobalSummary.pdf));  
 Annual Global Summary: 2012 Production, Imports, Exports and KPC Counts, Summary Report, June 19, 2013, ([https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public\\_statistics/2012/2012GlobalSummary.pdf](https://kimberleyprocessstatistics.org/static/pdfs/public_statistics/2012/2012GlobalSummary.pdf)).

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ դիտարկվող ողջ ժամանակահատվածում ՀՀ ներկրվող անմշակ ադամանդի միավոր կարատի միջին գներն ավելի բարձր են Քիմբերլեյ գործընթացի բոլոր մասնակից երկրների համար հաշվարկված ներկրման միջին գներից: Սա կարող է պայմանավորված լինել համեմատաբար խոշոր և թանկարժեք քարերի խմբաքանակների ներկրմամբ:

**Աղյուսակ 2**

*Անմշակ ադամանդի համաշխարհային արտահանումը Քիմբերլեյ գործընթացի շրջանակներում<sup>31</sup>*

Երկիր	Տարի	Արտահանում			
		ծավալը (հազար կարատ)	արժեքը (հազար ԱՄՆ դոլար)	միավոր կարատի միջին գինը (ԱՄՆ դոլար)	ՔԳՀ քանակը
Հայաստանի Հանրապետություն	2004	207,99	11129,70	53,51	51
	2005	203,45	16534,30	71,75	66
	2006	37,40	7033,29	188,05	46
	2007	19,86	3602,73	208,76	31
	2008	35,67	6851,01	192,07	36
	2009	12,39	3424,24	276,48	24
	2010	378,64	19867,90	52,47	37
	2011	263,68	41222,81	156,34	69
	2012	52,96	9167,56	173,11	59
ՔՀԾ մասնակից երկրներ	2004	495580,88	31887578,80	64,34	57088
	2005	514495,99	38328035,26	74,50	59188
	2006	485579,75	35682448,53	73,48	55076
	2007	471418,44	38707748,14	82,11	57163
	2008	412340,41	39059378,59	94,73	48957
	2009	317535,78	24997534,96	78,72	39852
	2010	413217,51	37590010,11	90,97	51880
	2011	384213,32	52825049,84	137,49	54754
	2012	389599,09	50271847,43	129,03	55912

ՔԳՀՇ շրջանակներում իրականացվող այնպիսի միջազգային առևտրում ՀՀ արտահանման համեմատաբար փոքր ծավալն օրինաչափ է համարվում, քանզի ներմուծված ադամանդի հումքն արտահանվում է միայն համապատասխան վերամշակման ենթարկվելուց հետո, իսկ մշակված ադամանդի առևտուրն առայժմ Քիմբերլեյ գործընթացի կողմից չի վերահսկվում, թեև նախատեսվում է վերջինիս գործունեությունը տարածել ոչ միայն անմշակ այնպիսիների, այլ նաև հղկված ադամանդների, իսկ հետագայում՝ նույնիսկ դրանցից պատրաստված ոսկերչական իրերի վրա<sup>32</sup>:

<sup>31</sup> Աղյուսակ 1-ի և 2-ի կազմման համար օգտագործվել են միևնույն վիճակագրական աղբյուրները:

<sup>32</sup> Տե՛ս **Улин Д.**, Современные тенденции на мировом рынке алмазов: Т5/10: Международное экономическое сотрудничество в глобальном мире /под ред. Н.Н. Левенцева/. М.: МГИМО – Университет, 2007, էջ 44:

Առավել մտահոգիչ է, որ տարեցտարի կրճատվում են հղկված ադամանդի արտահանման ծավալները, և Հայաստանն աստիճանաբար վերածվում է ադամանդ ներմուծող երկրի: Այնինչ, ապրանքախմբի արտահանման տատանումները մինչև վերջին տարիներն ուղղորդում էին երկրի արտահանման տեմպերը:

2010-2011 թթ. ՀՀ-ում արձանագրվել են չմշակված ադամանդի արտահանման ամենամեծ ծավալները Քիմբերլեյ գործընթացի մեկնարկից ի վեր: 2010, ինչպես և 2004-2005 թվականներին ՀՀ-ից արտահանվող ալմաստների միավոր կարատի միջին գները որոշակիորեն զիջել են արտահանման գների քիմբերլեյան միջին մակարդակը (աղյուսակ 2)՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով արտահանման ընդլայնման համար: Սակայն 2012 թ. դարձյալ նկատվել է ՔԳՀԾ շրջանակներում ՀՀ արտահանման ծավալների զգալի անկում:

Բնականաբար, ադամանդագործական և ոսկերչական արտադրանքի առևտրում ՀՀ խոշորագույն գործընկերը Եվրոմիությունն է, որին միայն 2011 թ. բաժին է ընկել ապրանքախմբի ողջ արտահանման 36,8%-ը, ներմուծման 31,4%-ը, իսկ ՔԳ մասնակից երկրների հետ ՀՀ առևտրում ԵՄ մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար՝ արտահանման 37,6%-ը և ներմուծման 31,7%-ը<sup>33</sup>: 2012 թ. այդ համամասնությունը փոքր-ինչ փոխվել է. մասնավորապես՝ 2012 թ. Եվրոմիությանը բաժին է ընկել ապրանքախմբի ողջ արտահանման 22,9%-ը և ներմուծման 34,9%-ը, իսկ ՔԳ մասնակից երկրների հետ ՀՀ առևտրում ԵՄ մասնաբաժինը կազմել է, համապատասխանաբար՝ արտահանման 23,9%-ը և ներմուծման 35%-ը<sup>34</sup>:

Նշենք նաև, որ ԵՄ-ը բոլոր տարիներին գլխավորել է ՔԳ մասնակից երկրների ցանկը թե՛ ներմուծման և թե՛ արտահանման ցուցանիշներով՝ գործընթացի մեկնարկից ի վեր ապահովելով ալմաստի համաշխարհային օրինական ներմուծման 36-39%-ը, համաշխարհային արտահանման 35-40%-ը:

Քիմբերլեյ գործընթացի մեկնարկով, փաստորեն, հստակեցվեց անմշակ ադամանդի միջազգային առևտրով զբաղվելու իրավասություն ունեցող երկրների ցանկը, որոնց միջև էլ պետք է շարունակվեր պայքարն արդյունահանվող ալմաստի տարեցտարի կրճատվող ծավալների համար: Եվ պատահական չէ, որ ալմաստի արդյունահանման ծավալների կրճատումը սրել է մրցակցությունը ադամանդի վերամշակման մեջ մասնագիտացած երկրներում, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է ամրապնդել դիրքերն ադամանդի համաշխարհային շուկայում՝ ավելացնելով սեփական արտադրության ծավալներն՝ ի հաշիվ պակաս մրցունակ գործընկերների: Բնականաբար, արտադրական համեմատաբար փոքր հզորությունների տեր Հայաստանի համար (որտեղ ադամանդի վերամշակմամբ զբաղված է շուրջ 2500 մասնագետ) դժվար է մրցակցել արդյունաբերական հսկաների հետ: Համաձայն քիմբերլեյան առևտրի վերջին տարիների միտումների՝ ադամանդի աշխատատար արտադրությունն աստիճանաբար տեղափոխվում է աշխատուժի ավելցուկ և աշխատավարձի առավել ցածր մակարդակ ունեցող երկրներ՝ Չինաստան:

<sup>33</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրորդ 2011 թվականին ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման», վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 53-56:

<sup>34</sup> Հաշվարկվել է համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրորդ 2012 թվականին ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման», ՀՀ ԱՎԾ, Եր., 2013, էջ 281-282:

տան, Հնդկաստան, Թաիլանդ, Վիետնամ<sup>35</sup>: Ակնհայտ է, որ այս միտումն անհետևանք չէր կարող անցնել ադամանդի վերամշակմամբ զբաղվող մյուս երկրների համար, առավել ևս, եթե հաշվի առնենք այն, որ նույնիսկ ճգնաժամի պայմաններում Չինաստանն ու Հնդկաստանը շարունակել են ամրապնդել իրենց ներկայությունն ադամանդի համաշխարհային շուկայում:

Չինաստանը դարձել է նաև սինթետիկ ադամանդի ամենախոշոր արտադրողն աշխարհում. արտադրությունը 2010 թ. գերազանցել է 7 մլրդ կարատը, ինչը համարժեք է սինթետիկ ադամանդի համաշխարհային արտադրության 90%-ին: Ընդ որում, վերջին տասը տարիներին այստեղ ադամանդի արտադրության աճի տարեկան միջին տեմպը կազմել է 20%, իսկ արտահանման աճինը՝ համապատասխանաբար 30%<sup>36</sup>:

Հնդկաստանը ներկայումս ադամանդի վերամշակման մեջ մասնագիտացած խոշորագույն երկիր է, որտեղ զբաղված 1 մլն մասնագետները (ոլորտում զբաղվածների ընդհանուր թվի 90%-ը) մշակում են չմշակված ադամանդների 57%-ն աշխարհում (արժեքային արտահայտությամբ): Իսկ կարատների ցուցանիշով Հնդկաստանի մասնաբաժինը ոլորտում կազմում է համաշխարհային շուկայի 80%-ը<sup>37</sup>:

Ադամանդագործության բնագավառում Հայաստանի գլխավոր մրցակցային առավելություններն, ի սկզբանե, եղել են որակյալ և համեմատաբար էժան աշխատուժի առկայությունը, ինչպես նաև ոլորտին ընձեռնված հարկային արտոնությունները: Հաշվի առնելով ադամանդի հղկման առանձնահատկությունները՝ համաշխարհային առևտրում երկրի մրցունակության վերականգնման և պահպանման առանցքային խնդիրը պետք է դառնա հմուտ ակնագործ մասնագետների պատրաստումը<sup>38</sup>: Բացի այդ, ոլորտի զարգացմանը նպաստող միջոցառումների շարքում պետք է առանձնացնել նաև օտարերկրյա ներդրումների ներգրավումը և միջպետական երկկողմ համաձայնագրերի միջոցով հումքի մատակարարման անընդհատության ապահովումը: Ներկայումս ՀՀ ադամանդի հումքի ամենախոշոր մատակարարը ռուսաստանյան «Ալուոսա» բաժնետիրական ընկերությունն է:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ-ում ադամանդագործության ոլորտում հաջողությունների ձեռքբերումն ամենևին էլ չի ենթադրում դրական առևտրային հաշվեկշռի ապահովում Քիմբերլեյ գործընթացի մասնակից երկրների հետ անմշակ ադամանդի համաշխարհային առևտրում. անդամակցությունն այս ծրագրին զուտ ադամանդի հումքի հասանելիության անհրաժեշտ նախապայմանն է: Վերամշակված ադամանդների համաշխարհային

<sup>35</sup> Տե՛ս **Ա. Փախյան**, Արտաքին առևտրի ազատականացումը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Ազրոգիտություն», թիվ 9-10 (625-626), 2010, էջ 373-378, <http://asrc.am/uploads/media/s-20.pdf>

<sup>36</sup> Տե՛ս **Li Z.H., Zhao B., Li L. and Wong J.**, China's Diamond in the World Market // Key Engineering Materials, Vol. 487 (2011), Switzerland, էջ 526-532, <http://www.scientific.net/KEM.487.526>.

<sup>37</sup> Տե՛ս <http://www.indianmirror.com/indian-industries/2012/diamond-2012.html> - Indian Diamond Industry at a Glance in 2011-2012:

<sup>38</sup> Ինչպես հայտնի է, արմատի երեսակումը բարդ և չափազանց աշխատատար գործընթաց է, որի ճշգրտությունից է կախված ապագա ադամանդի արժեքը: Խոշոր քարերի երեսակումը կարող է տևել ամիսներ, իսկ հազվագյուտներինը՝ նույնիսկ տարիներ: Ընդ որում, քարի ձևի և դրանում անկյունների ու նիստերի դիրքի ընտրությունն իրականացվում է այն հաշվարկով, որ ընկնող լույսը չանցնի քարի միջով, այլ ամբողջությամբ անդրադառնա՝ ապահովելով լույսի «խաղը»: Մշակման գործընթացում արմատի քաշը կրճատվում է 2-3 անգամ. համապատասխան չափով բարձրանում է վերջինիս արժեքը:

առևտուրը դուրս է Քիմբերլեյ գործընթացի վերահսկողության շրջանակներից:

«Ն տնտեսության շահերից ելնելով՝ ադամանդագործության ոլորտի զարգացմանն ուղղված քայլերը պետք է նպաստեն արդեն հղկված ադամանդների հիման վրա պատրաստի ոսկյա զարդերի արտադրության և արտահանման ընդլայնմանը, քանզի այս դեպքում երկրում ավելացված արժեքն ավելի մեծ կլինի, իսկ արտահանման եկամուտներն՝ առավել շոշափելի:

**АННА ПАХЛЯН**

Главный специалист отдела обеспечения качества,  
ассистент кафедры „Международных экономических отношений” АГЭУ,  
кандидат экономических наук

**Республика Армения на мировом рынке „бесконфликтных алмазов”.**– Система сертификации Кимберлийского процесса (ССКП) позволяет ее членам сертифицировать поставки необработанных алмазов как «бесконфликтные» и предотвратить доступ конфликтных алмазов к законной торговле. Участники могут легально торговать только с другими участниками системы, а международные поставки алмазного сырья должны сопровождаться сертификатом Кимберлийского процесса, гарантирующего их бесконфликтность. По состоянию на июль 2013 года, КП имеет 54 участников, представляющих 81 страну, включая Республику Армения, на долю которых приходится около 99,8% мирового производства алмазов.

С января 2003 года импорт необработанных алмазов в РА (по 710210000, 710221000 и 710231000 кодам ТН ВЭД) может быть реализован только при наличии сертификата Кимберлийского процесса, выданный страной-экспортером. Это означает, что экспорт и импорт любой партии алмазов, не соответствующей требованиям ССКП, будет рассматриваться как контрабандный товар.

Как страна, специализированная на обработке алмазов, Армения имеет небольшую долю в мировой торговле алмазами, осуществляемого в рамках Кимберлийского процесса. В мировом импорте бесконфликтных алмазов Армения имела свое крупнейшее участие в 2005 году, когда доля РА в импорте ССКП составила 0,57%. Своей крупнейшей доли в мировом экспорте бесконфликтных алмазов (0,08%) Армения достигла в 2011 году.

Исходя из экономических интересов Республики Армения, меры направленные на развитие алмазной промышленности, должны способствовать расширению производства и экспорта золотых ювелирных изделий, основанных на полированных в Армении алмазов, так как в этом случае добавленная стоимость будет больше, а доходы от экспорта - наиболее существенными.

**ANNA PAKHLYAN**


*Senior Specialist of the „Quality Assurance” Department,  
Assistant at the Chair of “International Economic Relations”  
at ASUE, PhD in Economics*

***The Republic of Armenia in the International Market of „Conflict-Free Diamonds”.***- The Kimberley Process Certification Scheme (KPCS) enables its members to certify shipments of rough diamonds as 'conflict-free' and prevent conflict diamonds from entering the legitimate trade. Participants can only legally trade with other participants and international shipments of rough diamonds must be accompanied by a Kimberley Process Certificate guaranteeing that they are conflict-free. As of July 2013, the KP has 54 participants, representing 81 countries, including the Republic of Armenia, which together account for approximately 99.8% of the global production of rough diamonds.

Since January 2003, the import of rough diamonds (under HS Codes of 710210000, 710221000 and 710231000) to the RA can be realized only in existence of Kimberley Process Certificate issued by the exporting country. That means that the export and import of any shipment of diamonds not corresponding to the requirements of KPCS will be considered as smuggled goods.

As a specialized country in processing diamonds, Armenia has an extremely small share in the global diamond trade, carried out under the Kimberley Process. In the world imports of the conflict diamonds Armenia had its largest part in 2005, when the proportion of the RA in the KPCS import was 0.57%. Its largest share in the world exports of conflict-free diamonds (0.08%) Armenia reached in 2011.

Based on the economic interests of the Republic of Armenia, the measures aimed at the development of the diamond industry should contribute to the expansion of production and exports of gold jewelry based on diamonds polished in Armenia, as in this case, the added value will be greater and the export revenues - more significant



## ՎԱՀԱՆ ԴԱՆՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի ասպիրանտ

### «ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ» ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գիտատեխնիկական հեղափոխության ծավալմանը զուգընթաց, աշխատուժի միջազգային միգրացիոն գործընթացներում առավել կարևոր տեղ է գրավում բարձր որակավորում ունեցող աշխատողների տեղաշարժը, որը ստացել է «ուղեղների արտահոսք» անվանումը: Այդ եզրույթն առաջացել է XX դարի 50-60-ական թվականներին Արևմտյան Եվրոպայի երկրներում ծագած նոր երևույթի բնութագրման համար: Խոսքը Եվրոպայից ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա երիտասարդ տաղանդավոր գիտնականների և տեխնոլոգների արտագաղթի մասին էր: Որոշ տնտեսագետներ «ուղեղների արտահոսքի» փոխարեն օգտագործում են ավելի չեզոք տարբերակներ, օրինակ՝ «ուղեղների փոխանակում» (Brain Exchange), «ուղեղների շարժունություն» (Brain Mobility): Սրանով փորձում են ընդգծել այս երևույթի ոչ միայն բացասական, այլ նաև դրական կողմերը:

Բարձրորակ մասնագետների արտահոսքը մեծ վնաս է հասցնում դոնոր երկրներին, քանի որ վերջիններս կորցնում են ոչ միայն նրանց պատրաստման համար կատարած ծախսերը, այլև տնտեսության առաջընթացին անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների ամենաօգտակար մասը:

Ուղեղների արտահոսքը վտանգ է ներկայացնում երկրի զարգացման հեռանկարների առումով, որը կառավարությունների առջև խնդիր է դնում համապատասխան միջոցառումներով կանխելու այն, հակառակ դեպքում դա վերջիվերջո կարող է տնտեսական և սոցիալական աղետների պատճառ դառնալ: Որոշ տնտեսագետներ ուղեղների արտահոսքը դիտում են որպես սպառնալիք ազգային անվտանգությանը, ուստի մի շարք զարգացող երկրների կառավարություններ կիրառում են այնպիսի միգրացիոն քաղաքականության, որով կկանխվի իրենց երկրներից որակավորված աշխատուժի արտահոսքը դեպի արտասահմանյան երկրներ:



Մինչդեռ, տնտեսապես զարգացած երկրներին ավելի ծեռնտու է թույլ զարգացած երկրներից պատրաստի մասնագետների ներհոսքը, քան նրանց պատրաստումը տեղում, որը մեծ ծախսեր կպահանջի: Տնտեսումը մեծանում է նաև այլ երկրներից եկած պատրաստի մասնագետների երկարատև ժամանակաշրջանում աշխատանքից՝ նկատի ունենալով վճարման և սոցիալական ծախսերի տարբերությունները:

Կա նաև այլ կարծիք, թե ուղեղների արտահոսքը կարող է դոնոր երկրում նպաստել մարդկային կապիտալի զարգացմանը: ԱՄՆ-ում զարգացող երկրներից ներգաղթած բժիշկները և բուժքույրերը աշխատանքի տեղավորվելու մեծ հնարավորություններ ունեն, որը դոնոր երկրներում խթաններ է ստեղծում ավելացնելու այդ մասնագիտություններով կրթություն ստացողների թվաքանակը: Դոնոր երկիրը, այլ հավասար պայմաններում, որոշակի օգուտ է ստանում, որն արտահայտվում է դրամական փոխանցումների (տրանսֆերտների) և ներդրումների ձևով, ինչպես նաև ռեցիպիենտ (ընդունող) երկրում ձեռք բերած հմտությունները և փորձը հայրենիք տեղափոխելու միջոցով: Փաստերը վկայում են, որ ուղղակի կապ կա ԱՄՆ-ում որակավորված ներգաղթյալների (իմիգրանտ) թվի և այստեղից դեպի դոնոր երկրներ ՕՈՒՆ-ների մակարդակների միջև: Փորձագետների գնահատմամբ՝ զարգացող շատ երկրներ յուրաքանչյուր որակավորված արտագաղթյալի (եմիգրանտ) հաշվով տարեկան ստանում են 500-2000 դոլար եկամուտ<sup>1</sup>:

Նախկինում, որպես կանոն, բարձր որակավորում ունեցող մասնագետները զարգացող երկրներից տեղափոխվել են զարգացած երկրներ, որին նպաստել են հետևյալ գործոնները.

- ընդունող երկրներում աշխատավարձի բարձր մակարդակը,
- ստեղծագործական աշխատանքի լայն հնարավորությունները,
- տեխնիկական միջոցներով և լաբորատոր պայմաններով առավելազույն ապահովվածությունը,
- սոցիալ-կենցաղային բարենպաստ պայմանները,
- ժողովրդավարությունը,
- դոնոր երկրներում գիտատար կամ բարձրտեխնոլոգատար արտադրությունների բացակայությունը:

Հետագայում տեղի է ունեցել (և ունենում է) հակառակ գործընթացը՝ շատ գիտնականներ, ինժեներներ, բժիշկներ, բարձրագույն կրթությամբ այլ փորձառու մասնագետներ զարգացած երկրներից տեղափոխվում են զարգացող երկրներ՝ կապված այդ երկրներում բարձրտեխնոլոգատար արտադրությունների զարգացման հետ:

Արդի ժամանակաշրջանում ուղեղների արտահոսքը դարձել է համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից մեկը: Շատ երկրներում ստեղծվում են այնպիսի պայմաններ, որոնք թելադրված են գիտատեխնիկական առաջընթացի և արդյունաբերության առաջատար նոր ճյուղերի զարգացմամբ: Ընդհանրապես, որպեսզի ընդունող երկրի օգուտը հասնի առավելազույնի, վերջինս պետք է ներմուծի այնպիսի աշխատուժ, որի պակասը զգացվում է, և որի պատրաստման համար պահանջվում են մեծ ծախսեր:

Աշխարհի տարբեր երկրներից բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման բավական մեծ փորձ ունի ԱՄՆ-ը: Ուղեղների ներ-

<sup>1</sup> Տե՛ս **Gibson J., McKenzie D.**, Eight questions about brain drain, 2011, էջ 16:

հոսքը դեպի ԱՄՆ տեղի է ունենում տարբեր երկրներից և տարբեր ուղիներով<sup>2</sup>:

